ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳԻՒՏԻ 1500 ԱՄԵԱԿԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Հայոց գրերի գիւտի 1500 ամեակի և տպագրութեան 400 ամեակի առթիւ Ն. Սրբութեան կարգադրութեամբ կազմուած և հաստատուած է խմբագրական մի մասնաժողով, որի վրայ պարտաւորութիւն է դրուած մի գիտական ժողովածու հրատարակել միացեալ երկու մեծ տօներին վայել լրջութեամբ և ճոխութեամբ։ Ժողովածուի նիւթ պէտք է լինի ընդարձակ մտքով հասկացուած հայագիտական ամեն մի յօդուած, այսինքն հայ պատմութեան, մատենագրութեան, լեզուի, հնագիտութեան և արուեստի, աշխարհագրութեան, ազգագրութեան ևն. վերաբերեալ և կ՚ընդունուի խմբագրական մասնաժողովի կողմից։ Յօդուածի ծաւալը պէտք է լինի ոչ աւելի, քան երկու տպագրական թերթ 16⁰։ Իւրաքանչիւր երեսի համար նշանակուած է մի ռուբլի վարձատրութիւն։ Այսու Մ. Աթոռի կարող միաբաններից և Ճեմարանի ուսուցիչներից զատ՝ հրաւիրուում են և դրսի հայ բանասէրները մասկակցելու մեր կազմելիք ժողովածուին։ Յօդուածները պէտք է ուղարկուեն ոչ ուշ քան հոկտեմբերի վերջը։ Ընդունուած յօդուածները հեղինակների ցանկութեան համեմատ յետ կուղարկուին իրենց։

Խմբագրական մասնաժողովի փոխ նախագահ
Գարեգին վարդապետ

Քարտուղար Ս. Կանայեան